

## Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

---

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՆՏ- ՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ.

---

Այնչափաւ կաթուղիկոսի այս անգամուայ ընտրութիւնը անշուշտ մեր պատմութեան նշանաւոր անցքերի շարքը պէտք է մտնի այն մեծ մասնակցութեամբ, որ ազգը ունեցաւ, և առաջին կաթուղիկոսացուի անձնաւորութեան արտասովոր արժանաւորութեամբ: Այսպիսի փառաւոր վայրկեան քիչ է տեսել մեր ազգը շատ չէ պատահում, որ անձնաւորութիւնը իւր մէջ ի մի ամփոփէ ազգի ժամանակակից բոլոր իղձերը և նրան նուիրական և պաշտելի բոլոր առաքինութիւնները, իսկ աւելի քիչ է պատահում, որ այդ տեսակ անձնաւորութիւնը միահամուռ գնահատուի ժամանակակիցներից:

Ահա հայերի մէջ վաղուց է, որ փայլում է այդ տեսակ մի անձնաւորութիւն, որի անունը և համբաւը սգւորում են ռամկից սկսած մինչև ամենակրթուածը, որոնք միմիայն ընդունակ են յարգել առաքինութիւնը և հասարակաց շահը, և բաղքը վիճակել էր հայերին ամենապատկառելի և ամենապատուաբեր և, միևնոյն ժամանակ, իրենց համար ամենաօգտաւէտ պատմական գործ կատարելու, պսակել այդ տեսակ մարդու գործունէութիւնը տալով վերջապէս նորան ազգային ապարէզի մէջ առաջին տեղը: Ամենապատիւ Խրիմեան Մկրտիչ արքեպիսկոպոսի

ընտրութիւնը ամենատրախալի նշանն է հայ ազգի հասարակական հասունութեան և որպիսի ընտրութիւն, մենք իզուր պէտք է փնտռենք նորա նման շատերը անցեալում: Այս դէպքում միայն կարելի է ասել, թէ ամենայն Հայոց կաթուղիկոսին ընտրեց ամբողջ հայ ազգը՝ աշխարհի բոլոր անկիւններից միանալով այդ նպատակի համար:

Ս. էջմիածնում գումարուած Համազգային ժողովը մի վեհ և հետաքրքիր տեսարան էր ներկայացնում: Գարերից ի վեր գանազան մասերում ցրուած հայերը այս անգամ միացել էին և մի ամբողջութիւն էին ներկայացնում, որոնց մէջ անխափր վառ էր սերը դէպի ազգային եկեղեցին և ազգը: Բոլորին էլ միևնոյն գաղափարներն էին ոգևորում ընդհանուր ազգի վերաբերմամբ և, կարծես, մարդ ուզում էր մոռանալ, որ հայ ազգը ցրուած է և բաժան բաժան եղած վաղուց ի վեր, այնքան դեռ զօրեղ են միազգութեան և միգաւանութեան կապերը:

Այս մեծ ժողովում միմեանց էին հանգիպում բուն Հայաստանի ներկայացուցիչների հետ Խալաֆանի և Հնդկաստանի, Անատոլիայի Աւստրալիայի և Եգիպտոսի ներկայացուցիչները և դոքա արդարացրին այն յատահութիւնը, որը դրել էին նրանց վերայ նրանց ընտրող և ուղարկող գաւառները: Նոքա արժանաւոր արտայայտողներ հանդիսացան ազգի բաղձանքին և իրենց կատարած մեծ գործով, մշտապէս կապեցին իրենց անունները մեր ազգի կեանքի լուսաւոր և փառաւոր պատմական մի վայրկեանի հետ:

Այս խօսքերը ի հարկէ չեն վերաբերում այն սակաւաթիւ անհասանելի, որոնք չկարողացան կամ անընդունակ էին արժանաւոր կերպով կատարելու իրենց լիճակուած նշանաւոր դերը: Դոքա մասին պատասխանատու են միմիայն իրենք, որովհետև դոքա և ազգի կամքի մէջ ոչ մի կապ չկար, բայց կարող է լինել մի որ և է հասարակական մեծ գործ, որ ինչքան էլ փառաւոր կերպով կատարուի, գործ չունենայ բացասական ոյժերի հետ: Քանի մարդկային հասարակութիւնը գոյութիւն ունի, գոյութիւն կունենան և բացասականները, մարդկութեան

յառաջադիմութիւն կայանում է այդ տեսակ ոյժերի սահմանափակման մէջ. ուրեմն և մեր այս անգամուայ ազգային գործում ազգի համար մի քանի անախորժ արտայայտութիւններ չպիտի զարմացնեն մեզ և արտասուլոր թուեն: Հետաքրքիրը միտիթարականը և անմոռանալին այն է, որ ազգի իսկական ներկայացուցիչները և նրա կամքի իսկական արտայայտիչները այնպիսի մի մեծ թիւ ներկայացրին և այնպիսի մի մեծ բարոյական զօրութիւն էին կազմում: որ իրենց հետ տարան և իրենց մեծ գործին մասնակից արին և միւսներին. և այդպիսով ազգի անպայման ցանկալի թիկնածուն միաձայն ընտրուեց Աթուղիկոսացու Հայաստանեայց Հայրապետական Վահին:

Այս մեծ Համազգային խորովի գործունէութիւնը և կատարած գործը արժանի էին մանրամասն նկարագրութիւնների և բացատրութիւնների, բայց մենք առ այժմ կբաւականանանք նրա մի քանի նշանաւոր և անմոռանալի վայրկեանների նկարագրութեամբ, որոնց մէջ արտայայտուեց և հասունացաւ ընտրութեան փառաւոր ելքը. ևս առաւել անհրաժեշտ է այդ նշանաւոր վայրկեանների նկարագրութիւնը նրա համար, որ ընտրութեան համար եկող պատգամաւորները ըստմեծի մասին մինչև Ս. Էջմիածին գալը անտեղեակ էին միմեանց համոզմունքներին և բչերը չէին, որ զանազան թիւրիմացութիւնների զոհ էին այն նենգաւոր գործիչների շնորհիւ, որոնք ցաւալի անցեալից յետոյ ոչ մի կերպ չէին կարողանում հաշտուել այն նոր և սթափեցուցիչ հոսանքի հետ, որը այս կարճ ժամանակամիջոցում ոչ մի ճիգ և աշխատանք չխնայեց մօտեցնելու Մայր Աթոռը ազգին, աշխատելով որ նա կարողանայ բաւարարութիւն տալ ժամանակակից բարգ պահանջներին, միևնոյն ժամանակ ջանալով ըստ կարեաց արմատախիլ անել այն տխուր սուլորութիւնները և երեւոյթները, որոնք, կարծես, բնական և սուլորական էին գառել:

Ապրելի 28-ից դեռ նոր սկսեցին տեղս ժամանել ընտրութեան պատգամաւորները և այնուհետև դեռ մինչև Մայիսի 2-ը շարունակուում էր նրանց անընդհատ գալը, և այսպիսի կարճ ժա-

մանակամիջոցում այնպիսի գործունէութիւն տեղի ունեցաւ, որը նախատեսել ոչ մի կերպ չէր հնարաւոր և որը դեռ մինչև այժմ զարմանալի և անհաւատալի է թւում: Այն բանը, որի համար շարաթներ և ամիսներ է հարկաւոր, այստեղ առանց չափազանցութեան կարելի է ասել, որ այս անգամ մի օրուայ մէջ էր տեղի ունենում: Կարճ ժամանակի մէջ զանազան հեռաւոր անկիւններում ցրուած հայ ազգի ներկայացուցիչները կարողանում էին միմեանց ճանաչել, համերաշխ լինել և մի դրոշակի շուրջը խմբուել. և այդ բոլոր յարաբերութիւնների մէջ Խրիմեանի անմահ անունը ինչպէս լուսատու ջահ, լոյս էր սփռում և հեշտացնում միմեանց ճանաչելու գործը և ընտրութեան ծրագիրը: Կարծես, իրենք պատգամաւորները լաւ զգում էին ժամանակի կարճ և անդաւնալի լինելը և հազիւ դեռ տեղս իջած անյապաղ սկսում էին ընտրութեան վերաբերեալ իրենց գործունէութիւնը: Թալներով ընդունուած և մշտական սովորութիւնները, նոքա իսկոյն և եթ ծանօթանում էին միմեանց հետ, մտքերի փոխանակութիւն էին սկսում պարզելով իրենց գրական ծրագիրը և աշխատելով հերքել վտանգաւոր և ժամանակի ընթացքում բարդուած թիւրիմացութիւնները:

Երբ պատգամաւորների թիւը մի փոքր ստուարացաւ, նոքա իսկոյն և եթ ձեւնարկեցին նախապատրաստական ժողովներ կազմելու, որոնց նպատակն էր ապահովացնել Խրիմեան Հայրիկի առաջին թեկնածութիւնը և որոշելու միւս երեք թեկնածուների անունները, որոնց մէջ պիտի լինէր երկրորդ թեկնածուն, որը և կազմում էր բուն և իսկական պատճառը բոլոր այս ուղղութեամբ տարած գործողութիւնների: Առհասարակ այս ընտրութեան ժամանակ երկրորդ թեկնածուի խնդիրը նշանաւոր տեղ էր բռնում և վերջինիս վերաբերմամբ միայն ոյժերը լուծւում էին մրցող մասերի, ստուար մեծամասնութեամբ համերաշխ լինելով առաջին թեկնածուի վերաբերմամբ: Մենք անհրաժեշտ չենք համարում այս նկարագրութեան մէջ որոշել զանազան գործիչների դերերը և մասնակրութեան չափը ընտրութեան ելքի վերաբերմամբ, որովհետև այդ կողմից անցքը լաւ լուսա-

բանուած է հասարակութեան համար շնորհիւ բազմաթիւ հանգամանքների: Մենք չենք կարող չնկատել միայն մի բան, որ այս մեծ հասարակական գործում՝ մեր կեանքում նշանակութիւն և ազդեցութիւն ունեցող այժերը լաւ պարզուեցին և հասարակութիւնը նոցա աւելի ճիշտ գնահատելու հնարաւորութիւն ունի: Աւրիշ կերպ էլ չէր էլ կարող լինել: Մեծ հասարակական գործը երբէք միայն իւր իրացումով չի վերջանում: Նա գաղափարների և հասարակական այժերի գործունէութեան ընթացքի վերայ միշտ ազդում է և շատ անգամ այն աստիճան, որ նոցա մէջ գերերի նոր դասաւորութիւն է առաջ գալիս: Այս անգամուայ մեր կաթողիկոսական ընտրութիւնը այդ կողմից գեւ երկար ժամանակուայ ընթացքում կզգացուի: Մեծ գործերը շատ անգամ մտքերի մէջ մի ժամուայ ընթացքում այնպիսի փոփոխութիւն են կատարում, և այնքան խճճուած հարցեր և թիւրիմացութիւններ են լուծում, որոնք երկար ժամանակ մեծ գեր են կատարելիս լինում հասարակութեան համոզմունքների մէջ: Հասկանալի է պատճառը: Երբ մի գործում շօշափուում է հասարակութեան ամենաթանգ շահը, ամեն մի հասարակական գործից կամ ներկայացուցիչ իւր վերաբերումով գէպի այդ գործը ամենալաւ միջոց է տալիս իրեն ճանաչելու և գնահատելու և կարճ ժամանակում պարզում է այն, ինչ որ երկար զբաղեցրել է ամբողջ հասարակութիւնը և բանակաւորի նիւթ եղել: Մենք ականատես էինք այդպիսի մի հետաքրքրաշարժ և հազուագիւտ տեսարանի: Մենք տեսնում էինք, թէ ինչպէս ընտրութեան գործի հետ զուգընթացաբար առաջ էր գնում մտքերի, համոզմունքների և կարծիքների փոփոխութիւն: Եւս առաւել այդ նկատելի էր մեր տաճկաստանցի հայրենակիցների վերայ: Շատ բանի մասին նոքա պիտի փոխէին իրենց կարծիքները և փարատէին կասկածները, չնայելով որ այդ կարծիքները և կասկածները նրանց համոզմունքների մէջ աշխատել էին նստացնել երկար ժամանակուայ ընթացքում: Այս, այս ընտրութիւնը իւր այս բարերար կողմից ևս երբէք չպիտի մոռացուի: Նա պարզեց հասարակութեան նրա գործիչ-

ների իսկական պատկերները, ցոյց տալով ազգին նրա ճշմարիտ բարեկամներին, միանգամից ոչնչացնելով զրպարտութեան երկար ժամանակեայ աշխատանքը: Այս բանը անընդհատ արտայայտուած էր թէ՛ Տաճկաստանցիների կողմից և թէ՛ Էջմիածնում ժողովուած բազմաթիւ հասարակութեան, երբեմն զգացմունքների բուռն արտայայտութեան ձևով մի քանի բարձրատիճան հոգևորականների վերաբերմամբ:

Նախապատրաստական ժողովները անընդհատ տեղի էին ունենում: Պոցա գլխաւոր նպատակն էր, ինչպէս ասացինք, համաձայնութիւն կայացնել Խրիմեան Հայրիկի միաձայն ընտրութեան համար, ևս մի այլ կարևոր կետի վերաբերմամբ: Էջմիածնում ժողովուել էր մի մեծ հասարակութիւն, որը հեռուում էր ընտրութեան բոլոր ել և էջերին և յուզուած շարունակ ցանկութիւն էր արտայայտում Խրիմեան Հայրիկին տեսնել միաձայն ընտրուած կաթողիկոսացու:

Մինչև Մայիսի 2-ը ընտրելիների ցանկը գեռ չ'երջնականապէս չէր որոշուած, բայց բանակցութիւնների վախճանը արդէն նախատեսել կարելի էր: Պատգամաւորները գեռ շարունակում էին գալ: Տաճկաստանցիներից վերջին եկողներն էին ամենամօտիկ գաւառների ներկայացուցիչները գալու համար ուշ իրաւունք ստանալու պատճառաւ: Այդ օրը տաճկաստանցի պատգամաւորների թիւը հասաւ 38-ի, որոնք ունէին 44 ձայն: Բացակայում էին Գլխաւորապէս ներքին գաւառների ներկայացուցիչները, աւելի մեծ թուով էին Բարձր Հայրի, Անատօլիայի, Աումեյլիայի և միւս գաղթականութիւնների ներկայացուցիչները: Ամենաուրախալին այն էր, որ վերջին օրը հասան մի քանի ներքին գաւառների ներկայացուցիչները, այն է՝ Երզրումի, Երզնկայի, Մուշի և Բագրևանդի: Այսպիսով բուռն Տաճկահայաստանը ևս ունեցաւ իւր ներկայացուցիչները այս համազգային գործում: Տաճկաստանցի պատգամաւորները այս հանգամանքը այսպէս էին բացատրում: Պատրիարք Հայրը անհրաժեշտութեանմէջ էր գտնուած եղել սահմանախակ թիւ ներկայացնել կառավարութեան թոյլատուութեան կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար:

Մենք մեր կողմից անկարող ենք ցաւ չյայտնել, որ ընտրութեան մասնակցողների ցուցակը կազմելուս՝ սկզբում ներքին գաւառները՝ այսինքն բուն Տաճկահայաստանը աչքի առաջ չեն ունեցած եղել: Նոյն պատգամաւորները յայտնեցին Մայիսի մէկին, որ իրենք արդէն տեղեկութիւն են ստացել, որ մնացած գաւառների ներկայացուցիչները ևս թողաւութիւն են ստացել գալու և գուցէ մի քանիսը կարողանան հասնել ընտրութեան, արդէն դուրս եկած լինելով, ինչպէս իսկապէս և կատարուեցաւ: Ներքին գաւառների ներկայացուցիչների գալը մեծ ուրախութիւն պատճառեց թէ պատգամաւորներին և թէ տեղս գանուող հասարակութեանը:

Վերջապէս բանակցութիւնները պսակուեցին ցանկալի վախճանով: Ռուսաստանի և Տաճկաստանի պատգամաւորները համաձայնութիւն կայացրին խրիմեան Հայրիկին ընտրել միաձայն, իրրև երկրորդ թիկնածու ընտրել Արբազան Մարութէոս եպիսկոպոս Իզմիրլեանին, իսկ իրրև երրորդ և չորրորդ թեկնածուներ Արբազան Խորէն եպիսկոպոս Մխիթարեանին և Արբազան Երեմիա արք-եպիսկոպոսին: Այս ոչ պաշտօնական համաձայնութիւնը որոշեց ընտրութեան ելքը: Հասարակութեան արդէն մանրամասը յայտնի է, թէ այս համաձայնութիւնը կայացնելու համար որպիսի անձնաւորութիւններ նշանաւոր դեր խաղացին և որն էր գլխաւոր խոչնդատը, որի վերացման համար մեծ ջանք և զոհողութիւն գործադրուեց:

Մայիսի 2-ին կայացաւ առաջին կիսապաշտօնական ժողովը Ամենապատիւ Տէր Տեղակալի նախագահութեամբ, ուր կարգացուեց Ամեն. Պատրիարքի կոնդակը և ուղարկուած կարծիքները: Իրանից դուրս ժողովը այդ նիստում ուրիշ հարցով չզբաղուեց:

Վերջապէս հասաւ Մայիսի 3-ը: Պարզ էր, որ այլ ևս մնացած ներքին գաւառների ներկայացուցիչները չպիտի հասնէին, եթէ դուրս էլ եկած լինէին: Այսօր առաւօտեան պատգամաւորները և կառավարութեան ներկայացուցիչ Պ. Պրիբիլ և Սիւօզի Պրօկուրօրը ժողովուեցին Վեհարան, որտեղից տեղի ունե-

ցաւ Հանդիսաւոր ընթացքը դէպի Տաճարը առաջնորդութեամբ Ամենապատիւ Տէր Տեղակալի: Այս Հանդիսաւոր ընթացքի տպաւորութիւնը արտասուօր էր և հայերին վաղուց անծանօթ: Վաղուց է՝ որ մենք ամբողջ աղգը ներկայացնող ժողովներ չենք ունեցել: Ականատեսների յուզման և զմայլման չափ չկար: Երբ Վեհարանի բակի դռնից երևաց Հանդիսաւոր ընթացքի սկիզբը՝ ամբոխը թնդաց կեցցէ Խրիմեան, կեցցէ պատգամաւորները ձայներով, որոնք չգազարեցին մինչև պատգամաւորների եկեղեցի մտնելը: Պատարագից յետոյ, որը մատուցեց իջման Սեղանի վերայ Աղուանեան Արքայազանը, բոլոր պատգամաւորները ծրնկաչօք լսեցին մաղթանք ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ և ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ համար: Ապա աշխարհական պատգամաւորները տուեցին ընդունուած Հանդիսաւոր երգումը, որը կարգում էր զգացուած և ազգու ձայնով Ամենապատիւ Տէր Տեղակալը: Հայ ազգի աշխարհական պատգամաւորները Հայաստանեայց Եկեղեցու Մայր Տաճարում Հանդիսաւոր երգում էին տալիս իղճի մտօք ընարել Ամենայն Հայոց Կաթողիկոսին և նոքա վերջը կատարեցին իրենց երգումը: Երբ նոքա դուրս եկան եկեղեցուց ամբոխը ընդունեց նրանց ողջոյններով և կեցցէ Խրիմեան ձայն տալով:

Մայիսի 4-ին ընտրութեան առաջին և նշանաւոր վայրկեանն էր: Առաւօտուանից բազմատեսակ հասարակութիւնը, որի մէջ կային նշանաւոր թուով ինտելլիգենտ տիկիներ և պարոնների լցրեց վանքի բակը: Բոլորի երեսի վերայ հանգարտութիւն էր նկատուում, բայց այն հանգարտութիւնը, որը հետևում է սաստիկ յուզուած զգացմունքների յաջողակ ելքին: Պատգամաւորները սկսեցին ժողովուել Վեհարան, գնալու ժամանակ անընդհատ արժանանալով ամբոխի զգացուած ողջոյններին, որով նա արտայայտում էր իւր գոհունակութիւնը կայացրած համերաշխութեան համար, որով ապահովացուում էր Խրիմեանի միաձայն ընտրութիւնը: Կրկնուեց նոյն Հանդիսաւոր ընթացքը, ինչ որ նախընթաց օրը: Ամբոխի մէջ տեսնուում էին մարդիկ, որոնք ձեռքերը բարձրացրած աղօթել սկսեցին: Ինչ էր նրանց սրտաշարժ աղօթքի միտքը, կարիք չկայ բացատրելու, միայն առանց

զգացուելու անկարելի էր նայել այդ ռամիկ մարդկանց վերայ, որոնք այնքան իրենց սրտին մտնիկ էին համարում իրենց աչքի առաջ կատարուող մեծ գործը: Պատգամաւորները փակուեցին Տաճարում: Նրանց թիւը 66 էր, 72 ձայնով: Գորանցից սաճկական թեմերը ունէին 44 ձայն: Տաճկական թեմերի թիւը, եթէ հաշուենք և Կամասկոսը, Բերութը, Կիպրոսը և Հոպպէ, որոնք երուսաղէմի Պատրիարքի թեմերն են կազմում, հասնում է 64-ի, որոնք հետեւաբար պիտի ունենային 93 ձայն: Գորանց մէջ զգացում էր միայն ներքին գաւառների ներկայացուցիչների բացակայութիւնը: Առուստտանի և Պարսկաստանի թեմերի ներկայացուցիչները բացի Ասորախանի Առաջնորդը բոլորն էլ ներկայ էին <sup>1)</sup>: Ներքեւում մենք գնում ենք Տաճկահայոց Առուսահայոց Պարսկահայոց թեմերի ցուցակը, որից կարելի է տեսնել, ո՞ր թեմերի ներկայացուցիչները բացակայում էին և ո՞ր աստիճանի նշանաւոր թեմեր կային գրանցում: Մասնակցողների ցուցակը դրուած է ներկայ համարումն տպուող Աինօզի պաշտօնական տեղեկութեան մէջ: Համեմատութիւնից կարելի է նկատել, որ չնայելով պատգամաւորների թուին, ընտրութեանը չմասնակցեց ազգի փոքրաթիւ մասը, որ ստուար մեծամասնութիւնը ունէր այս համագային գործում իւր ներկայացուցիչները: Տասնչորս հոգեւոր և

ԲՈՂՈՐ ԹԵՄԵՐԻ ԳՈՒՅԱԿԸ:

- 1) Պատրիարք. 4. Պօլսոյ, 2) Առաջ. Թեքիրտաղու (Ռոթոսթոյ), 3) Առաջ. Աբրիանապօլսի, 4) Առաջ. Վառնայի, 5) Առաջ. Մօլդօ - Վալախիայի, 6) Առաջ. Տրապիզօնի, 7) Առաջ. Ճանիկու, 8) Առաջ. Շարին - Ղարահիսարի, 9) Առաջ. Տամգարայ և Ացպտերի, 10) Ամասիոյ և Մողղուանի, 11) Առաջ. Եւգոբիոյ, 12) Առաջ. Սերաստիոյ, 12) Առաջ. Կարնոյ, 14) Առաջ. Վանայ, 15) Առաջ. Լիմ և Կտուց անապատի, 16) Առաջ. Բասենի, 17) Առաջ. Բայազիտու (Ալաշկերտի), 18) Առաջ. Մշոյ, 19) Առաջ. Կղիի, 20) Առաջ. Բաղիշու, 21) Առաջ. Դերջանի, 22) Առաջ. Բաբերգու, 23) Առաջ. Երզնկայի, 24) Առաջ. Զնկուշի, 25) Առաջ. Բալուի, 26) Առաջ. Չարսանջախի, 27) Առաջ. Խարբերդի:

աշխարհական պատգամաւորներ ուղարկել էին գրաւոր կարծիքները՝ այն է՝ առաջնորդներ, Եղեսիոյ, Պանարմայի, Աստրախանի Զնքուշի, Արղնոյ, Վերջանի, Տիգրանակերտի, ապա աշխարհական պատգամաւորներ Տիգրանակերտի, Պանարմայի, Կուտինայի, Եղեսիոյ, Վերջանի, Զնքուշի և Չմշկածագի: Ուրեմն 87 ձայն պիտի մասնակցէին չորս թեկնածուներն ընտրութեանը:

Բայ անելով Համազգային ժողովի նիստը, Ամենապատիւ Տէր Տեղակալը ազգու խօսքերով յիշեցրեց Հայ ազգի անցեալ Հայրապետների արիութիւնը և անձնագոհութիւնը յօգուտ եկեղեցւոյ և ազգի առաջարկումէ ընտրել այդ մեծ Վաչին արժանի անձնաւորութիւն: Ապա Նորին ամենապատուութիւնը բարեմաղթութիւն արեց Սգոստափառ կայսեր կեանքի համար, որի հովանաւորութեան շնորհիւ ազգը ազատ կատարում է իւր եկեղեցու պետի ընտրութիւնը: Դորանից յետոյ ս. Պրօկուբօրը կարգաց կովկասեան կառավարչապետի գրութիւնը, որով առաջարկում էր բանալ ժողովը և յայտնուում էր, որ Բարձր Իշխանութեան կողմից ներկա-

- 28) Առաջ. Արապկերի, 29) Առաջ. Ակնոյ, 30) Առաջ. Քեամախու (Վամախ), 31) Առաջ. Արղնոյ, 32) Առաջ. Կեսարիոյ, 33) Առաջ. Տիգրանակերտի, 34) Առաջ. Քրոստանի, 35) Առաջ. Եղեսիայի, 36) Առաջ. Բաղդադու, 37) Առաջ. Ղալաթիոյ, 38) Առաջ. Չմիւռնիոյ, 39) Առաջ. Եփեսոսի և Կրէտէյի, 40) Առաջ. Բանդրմայի, 41) Առաջ. Կուտինայի, 42) Առաջ. Նիկոմիդիոյ, 43) Առաջ. Խուզիվանի և Չմշկածագի, 44) Առաջ. Պրուսայի, 45) Պատրիարք. Երուսաղեմի, 46) Առաջնորդ. Յոպպէի, 47) Առաջ. Գամասկոսի, 48) Առաջ. Բերութի, 49) Առաջ. Կիպրոսի, 50) Կաթուղիկոս տանն Կիլիկիոյ, 51) Առաջնորդ. Ատանայի, 52) Առաջ. Հալէբի, 53) Առաջ. Այնթափի, 54) Առաջ. Հաջնոյ, 55) Առաջ. Մարաշու, 56) Առաջ. Չէյթուների, 57) Առաջ. Անտիօքայ, 58) Առաջ. Գեօզղաթի, 59) Առաջ. Գիւրունի, 60) Առաջ. Տիւրիկի, 61) Մալաթիոյ, 62) Առաջ. Թարէնդէի, 63) Կաթուղիկոս տանն Աղթամարայ, 64) Առաջնորդ. Կարկարոյ, 65) Առաջ. Ատրպատականի, 66) Առաջ. Ասպահանի և Հընդկաստանի, 67) Առաջ. Նոր - Նախիջևանի և Բեսարաբիոյ, 68) Առաջ. Աստրախանայ, 69) Առաջ Տփիխսայ, 70) Առաջ. Ղարաբաղի, 71) Առաջ. Շամախույ, 72) Առաջ. Երևանի:

յացուցիչ է նշանակուած գաղտնի խորհրդական պ. Պրիբիլ: Նախ քան ընտրութիւն սկսելը, Ամեն Տէր Տեղակալ յայտնում է, որ ինչպէս լսել է ժողովի անդամների մէջ համաձայնութիւն է կայացել ընտրելիների վերաբերմամբ: Ի պատասխան դորա Պարսկաստանի և Հնդկաստանի պատգամաւոր պ. Համբարձում Առաքելեանը, խօսք խնդրելով համաձայն յանձնարարութեան առաջ է բերում կայացած համաձայնութիւնը, մի ճառով, որի մէջ յիշելով այն ազատութիւնը որ տալիս է օրէնքը ժողովի իւրաքանչիւր անդամին, նա առաջարկում է յանուն Պարսկաստանի և Հնդկաստանի հայ ժողովրդի իբրև աւագագոյն ընտրելիներ չորս թեկնածուներ՝ Ամենապատիւ Տէր Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեանին, Գերապատիւ Տէր Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեանին, Գերապատիւ Տէր Խորէն Եպիսկոպոս Մխիթարեանին և Գերապատիւ Տէր Երեմիայ Արքեպիսկոպոս Տէր Սահակեանին, Երուսաղէմի Պատ. Տեղապահին: Իւր ճառը պ. Համբարձում Առաքելեանը ամբողջովին նուիրած էր Խրիմեան Հայրիկին: Պ. պատգամաւորը առաջ բերելով Համազգային ժողովին այդ մեծ մարդու առաքինութիւնները և արժանաւորութիւնները, ապացուցանում է նորա միաձայն ընտրութեան անհրաժեշտութիւնը և յիշեցնում է հայ ազգի ներկայացուցիչներին ամբողջ հայ ազգի կամքը Խրիմեան Հայրիկի միաձայն ընտրուելու մասին: Խրիմեան Հայրիկի յատկութիւնները թուելու Պ. պատգամաւորը շեշտեց մէկի վերայ— Հայրիկի օրինապահութեան մասին, որ նա գիտէ Աստուծուն տալ Աստուծուն, Կայսերն Կայսեր: Այս խօսքերը պ. Պրօկուրօր կանչելին իսկոյն մոցնում է արձանագրութեան մէջ: Պ. Առաքելեանի այս խօսքերը առարկութիւն է առաջ բերում Բրուսայի պատգամաւոր պ. Աբգար Յովհաննիսեանի կողմից, որը առաջարկում է աւելացնել, որ այդ կողմը յատուկ է և մեր բոլոր հոգևորականներին: Պ. Արծրունին Արաստանի և Իմերէթի պատգամաւորը սրատասխանում է, որ մէկի լաւ կողմերը առաջ բերել՝ չէ նշանակում նսեմացնել միւսին: Պ. Յովհաննիսեանի առաջարկութիւնը աւելացնում է արձանագրութեան: Պ. Համբարձում Առաքելեանը իւր ճառը վերջացնում է հետևեալ խօսքերով.

«Ս. Հարք, պարոններ, այս սուրբ տաճարի մէջ գումարուած է Ազգային Վեհաժողով որ ահագին պատմական նշանակութիւն պիտի ունենայ, այսօր ամբողջ հայ ազգի աչքը յառած է այստեղ այս Ս. Սեղանին, ուր Միաձինն Որդին իջած է:

Ապացուցէք, ապացուցանենք, որ արժանաւոր անդամներ ենք այս Վեհաժողովին. մի մոռանաք, որ ապագայ սերունդ կայ, պատմութեան անաչառ, ահեղ դատաստան կայ, դատակնիք կայ, եթէ մենք հակառակ ամբողջ ազգի ցանկութեան, ի վնաս Ս. եկեղեցւոյ ընտրենք պաշտելի ՀԱՅՐԻԿԻՆ:

Պ. Հ. Առաքելեանի առաջարկութիւնը միաձայն հաւանութիւն է գտնում ժողովի կողմից ինչպէս և պէտք էր սպասել: Ընտրութեանը մասնակցում էին 65 պատգամաւոր 72 ձայնով: Բացի այդ կային և գրաւոր ուղարկուած կարծիքներ, որոնք չորս թեկնածուների ընտրութեան ժամանակ նշանակութիւն ունին և հաշուում են քուէների թուում: Իսկ գորանցից երկու կաթողիկոսացու ընտրելու ժամանակ ոչ: Խրիմեան Հայրիկի ընտրութեան համար ուղարկած էին իւրեանց քուէները 5 պատգամաւորներ, Մատթէոս Եպիսկոպոս Խզմիրլեանի համար — 1, Աշգեան պատրիարքի համար 6, Վեհապետեան Յարութիւն Պատրիարքի համար 3, Խորէն Եպիսկոպոս Մխիթարեանի համար 2, Որմանեան Եպիսկոպոսի համար 2, Շիշմանեան Եպիսկոպոսի համար 2, Գէորգ Արք-եպոս Ծ.Ներսիսեանի համար 1: Ուրեմն Խրիմեան Հայրիկ ստացաւ 77 ձայն 86-ից: Սորանով վերջացաւ Մայիսի 4-ի նիստը: Հետեւեալ օրը Մայիսի 5-ն էր, ընտրութեան վճռողական րօպէն հասնում էր:

Պէտք է ասած, որ այս մեծ ժողովի բոլոր գործողութիւնները կատարուում էին մեծ օրինապահութեամբ և առանց թիւրիմացութիւնների, որպիսի երևոյթի հետեւանքն էր խաղաղութիւն ժողովի անդամների յարաբերութիւնների մէջ, որը ներշնչւում էր և բազմաթիւ ամբօսին: Մի դէպքում միայն կարծիքների տարբերութիւն եղաւ այն էլ, ժողովի մի անդամի Բրուսայի պատգամաւոր պ. Աբգար Յովհաննիսեանի կողմից: Պարոն պատգամաւորը ցանկանում էր, որ չորս թեկնածուներից երկու կաթողիկոսացու ընտրելու ժամանակ քուէարկութիւնը սկսուի

ոչ թէ աւագագոյն թեկնածուից՝ այս դէպքում՝ Խրիմեան Հայրիկից՝ այլ կրտսերագոյնից: Այս առաջարկութիւնով՝ պ. պատգամաւորը դիմեց Կառավարութեան ներկայացուցիչ պ. Պրիբիլին: Նորին Գերազանցութիւնը բացատրեց պ. պատգամաւորին, որ այդ առաջարկութիւնը հակասում է օրէնքի մտքին, որը բացորոշ պահանջում է, որ քուէարկութիւնը սկսուի աւագագոյնից: Բացի այս դէպքը օրէնքի մտքի մասին այլ ևս տարբեր կարծիքներ չեղան: Այստեղ հարկ է յիշել, որ թէ պ. Պրիբիլ և թէ պ. Կանչելի աչքի ընկնող օրինապահութեամբ և արգարութեամբ վարում էին իւրեանց պաշտօնները ընտրութեան գործում, որը նկատելի եղաւ ամբողջ հասարակութեան համար:

Այդպէս մօտենում էր անմոռանալի յիշատակի մայիսի հինգը: Բոլորի ուշը և միտքը մի բանով էր զբաղուած և զգացմունքները մի բանով լարուած այդ Խրիմեան Հայրիկի առաջին թեկնածու ընտրուելու հարցն էր:

Մայիսի 5-ին դեռ վաղ առաւօտուանից բաղմամբիւ ամբոխը լցուեց Վանքի բակը: Նա արտասուէր ջղային էր այդ օրը: Համակրանքի ցոյց էր անում այս կամ այն պատգամաւորին: Չնայելով զգացմունքների լարուած լինելուն կարգապահութիւնը չխանգարուեց ոչ մի տեղ: Պատգամաւորները վաղ սկսեցին ժողովուել Վեհարան և արդէն ժամի 9-ին հանգիսաւոր ընթացքով ուղղուեցին դէպի Մայր Տաճարը: Երբ նսբա երևացին, հազարաւոր ամբոխը թնդացրեց օդը կեցցէ Խրիմեան կեցցէ Հայրիկը ձայներով: Պատգամաւորները իրենք ևս յուզուած էին: Նսբա մտան եկեղեցի և փակուեցին: Սկսուեցին այն նշանաւոր մի քանի ժամերը, որոնք ընտրութեան ժամանակից ամենաերկար էին: Այլ որ մասնակից էր հասարակութեան այդ վայրկեանի տրամագրութեան, երբէք իւր կեանքում չսխտի մոռանայ իւր զգացածը: Մէկը միւսի հետևից անցնում էին ժամերը, սպասողութիւնը իւր գագաթնակէտին հասաւ, բայց ցանկալի լուրը դեռ չէր գալիս: Վերջապէս ժամի մօտ 12-ին Հայրիկի միաձայն առաջին թեկնածու ընտրուելու լուրը հասաւ և կայծակի արագութեամբ տարածուեց: Մի քանի վայրկեան ուրախութեան

արտայայտութիւնները և կեցցէները մի ձայնի էին ձուլուել, որը կարծես արտասանում էր մի վիթխարի հսկայ: Ամենքը շտապում էին շնորհաւորել միմեանց՝ երկար տարիների ընդհանուր ազգի բաղձանքի իրագործումը: Ազգային զգացմունքը լիովին բաւարարութիւն էր ստացել և այդ արտայայտում էր ուրախութեան բուռն նշաններով: Մի քանի րոպէ չէր անցել Խրիմեան Հայրիկի ընտրութիւնից յետոյ, երբ արտասուլօր և հազիւ երբ և իցէ տեսնուած նշան երեւաց երկնքի վերայ: Այդ օրը թափանցիկ և բարձր ամպերը բարակ քողով ծածկել էին երկինքը, որոնց միջից սահող արեգակը պարզ երևում էր: Յանկարծ պրտակաձև ծիածան պատեց արեգակի շուրջը, իւր մէջը առնելով Էջմիածնի Տաճարը. պսակի մէջ երևում էին ծիածանի բոլոր գոյները: Վեղեցիկ և աննման երևոյթի տպաւորութիւնը անկարելի է նկարագրել: Հրաշալի երևոյթը մօտ տասն րոպէ կանգ առնելով Տաճարի վերայ, սկսեց շարժուել դէպի արեւմուտք և Վեհարանի տանիքի վերայ ցրուեց: Հասարակութեան յուզմանը չափ չկար: Բոլորը գլուխները մերկացրած հիացած և զգացուած հետևում էին սքանչելի ծիածանին:

Հազիւ ժամի երկուսին պատգամաւորութիւնը, իւր գործը վերջացնելով, դուրս եկաւ Տաճարից: Ամբողջ հասարակութիւնը խրմբուած դէպի եկեղեցու դուռը սպասում էր նրան: Յոյսերին վերջ չկար, որոնցով հասարակութիւնը ողջունում էր պատգամաւորներին գորա հետ միասին անընդհատ կրկնելով կեցցէներ իւր սիրելի թեկնածուի վերաբերմամբ: Մարդ ուրախանում էր և նրա համար, որ առաքինութիւնը կարող է այդ աստիճան գնահատուել ժամանակակիցներից և լցում էր հաւատով մարդկութեան բարոյականութեան յառաջադիմութեան վերաբերմամբ: Եղան ջերմ համակրութեան ցոյցեր Ամենապատիւ Տ. Տեղակալին և Սրբազան Արիստակէս եպիսկոպոս Աեդրակեանին:

Այս օրուայ ընտրութիւնների ժամանակ ևս լինում են մի երկու պատգամաւորի կողմից առաջարկութիւններ քուէարկութիւնը սկսել ոչ աւագագոյնից, այսինքն Խրիմեան Հայրիկից, որը ստացել էր ամենից շատ քուէները, այլ մէկից կրտսերագոյններ:

րից: Պրօկուրօր պ. Կանչելին բացատրում է, որ օրէնքի պահանջին համաձայն պիտի քուէարկուի առագագոյնը և առաջարկում է Մկրտիչ Արք-եպիսկոպոս Խրիմեանի թերթը: Թեկնածուներից Խրիմեան Հայրիկը ստանում է Համագգային ժողովի բոլոր ձայները, Տէր Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան 50, Տէր Երեմիա Արք-եպիսկոպոս 19, Տէր Խորէն եպիսկոպոս 16:

Ժամի 3 ին տեղի ունեցաւ Վանքի Սեղանատանը հանդիսաւոր ճաշ, որին մասնակցեցին Համագգային ժողովի բոլոր անդամները, Էմիածնի Միաբանութիւնը, Բարձր Իշխանութեան ներկայացուցիչ պ. Պրիբիլ, պրօկուրօր Պ. Կանչելի և շատ պատուաւոր հիւրեր, թէով բոլորը աւելի քան երկու հարիւր մարդ: Հասարակութիւնը չէր հեռանում վանքի բակից, երբ պատգամաւորները սկսեցին ժողովուել են Սեղանատուն, ոգևորութեամբ համակրանաց ցոյցեր էր անում այս կամ այն պատգամաւորին: Աւելի մեծ կենդանութիւն ստացան այդ ցոյցերը, երբ երևացին Ամենապատիւ Տէր Տեղակալ և Արքագան Արիստակէս եպիսկոպոսը, որոնց կեցցէներ գոչելով իրենց խուչերից ուղեկցեց մինչ Սեղանատունը:

Ճաշի ժամանակ տիրում էր ընդհանուր ուրախութիւն: Որքան գեղեցիկ է այն տեսարանը, երբ բոլորը, կամ չնչին խտրութեամբ զգացուած և ուրախացած են մի ընդհանուր պատճառով: Գա կնշանակէ յաղթել է մի բարձր սկզբունք, որը շատ վեր է և անհամեմատ ոյժեղ է մասնաւոր շահերից: Երբ կարող է աւելի համակրելի թուալ հասարակութիւնը, քան թէ այդպիսի վայրկեանում: Եւ շատ են լինում արդեօք այդպիսի վայրկեաններ:

Ամենապատիւ Տէր Տեղակալը առաջարկեց ՕԳՈՍԱՓԱՌԻ ԿԱՅՍՐԻ կենացը, արտասանելով կենացին պատշաճաւոր խօսքեր, թուելով այն բարիքները, որոնք վայելում է Հայ ազգը ՆՐԱ հովանաւորութեան ներքոյ: Տեղի են ունենում անվերջանալի կեցցէներ և ճեմարանի երգեցիկ խումբը երգում է «Տէր Կեցո զԿԱՅՍՐՆ»: Պ. Պրիբիլ շնորհակալութիւն յայտնելով, յանուն Կայսերական Կառավարութեան, առաջարկում է իւր կողմից բաժակ Հայաստանեայց Եկեղեցւոյ բարօրութեան և պայծառութեան համար և ապա խմւում են Նոցա Մեծամեծութեանց Տաճկաց Կայսեր ՀԱ-

ՄԻՒ Սուլթանի և Պարսից Արեգակնափայլ ՆԱՍԻՐԷՒԴԻՆ Շահի կենացները, որը ընդունւում է ծափահարութիւններով և կեցցէներով: Ամենապատիւ Տէր Տեղակալը առաջարկում է ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ կենացը: Սրտի խորքերից բղխող կեցցէներ և ուրախութեան ձայներ երկար ժամանակ տիրում են Սեղանատանը: Երգւում է «Էմիածինն ի հօրէ»: Նիկոմիդիայի առաջնորդ Ստեփան եպիսկոպոսը բաժակ առաջարկելով, խօսում է բարձր ոճով, իրեն յատուկ խրոխտ և զգացուած ձայնով, սիրոյ և համերաշխութեան մասին: Ամբատեան Մեսրոպ Աբբեպիսկոպոսը բացատրելով, որ Ամենաողորմած ԿԱՅՍԵՐՆ էնք պարտական այն ազատութեամբ, որով կաատրուեց ընտրութիւնը, առաջարկեց մեր երկրի ԿԱՅՍԵՐ Ներկայացուցիչ կովկասեան ԿԱՌԱՎԱՐՅԱՎԵՄԻ կենացը յիշեցնելով Նորին Բարձր Գերազնութեան աջակցութիւն ընտրութեան գործում: Երկարատև կեցցէներով ընդունւում է կենացը: Պատգամաւոր պ. Մամիկոնեան առաջարկում է խմել երկրորդ կաթուղիկոսացու Սրբազան ԻԶՄԻՐԷԱՆԻ կենացը թուելով Նորին Սրբազնութեան արժանաւորութիւնները. Հետեւում են բազմաթիւ կեցցէներ. Պ. Գրիգոր Արժրուհի առաջարկելով Ամենապատիւ Տէր Տեղակալի Համազգային Ժողովի Նախագահի կենացը, խօսում է Նորին Ամենապատուութեան անաչառ և օրինակելի նախագահութեան մասին, որով նա խաղաղութեամբ և հազուադիւր կարգապահութեամբ, տարաւ ամբողջ ընտրական գործը: Նորին Ամենապատուութեան կենացը ընդունւում է մեծ ոգևորութեամբ: Սրբազան Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը առաջարկելով բոլոր պատգամաւորների կենացը, խօսեց ժողովրդի և նրա գործունեայ անդամների մասնակցութեան մասին, որոնց շնորհիւ ընտրութիւնը յաջող և պատուաբեր փախճան ունեցաւ մեր ազգի համար: Կեցցէներով և ոգևորութեամբ խմուեց այս կենացը: Պ. Համբարձում Առաքելեան վերստին խօսելով Խրիմեանի օրինապահութեան մասին տալ Աստուծուն Աստուծոյ կայսերն կայսեր և առաջ բերելով այն իրողութիւնը, որ հայերը Ռուսաստանում օրինապահութեան ջերմ հետևողներ են, առաջարկեց խմել Բարձր Իշխանութեան ներկայացուցիչ պ. Պրիբիլի

կենացը: Պ. Աթաբէգեան առաջարկեց խմել Սինօղի պրօկուբօր պ. կանչելիի կենացը, յիշելով նրա խիստ օրինական և ընդհանուրին համակրելի պաշտօնախարութիւնը ընտրութեան գործում: Երկու պաշտօնեաների կենացներն էլ մեծ համակրութեամբ ընդունուեցան: Ապա շատ կենացներ առաջարկուեցան, նրանց թրւում Սրբազան Խապայեան եպիսկոպոսը առաջարկեց խմել Ազգեան Պատրիարքի կենացը, յիշեցնելով Նորին Սրբազնութեան աջակցութիւնը ընտրութեան գործում: Ժամի 5-ին սեզանը վերջացաւ, Համազգային ժողովի անդամները նկարուեցան:

Բազմաթիւ հասարակութիւնը, որ դեռ շարունակում էր մնալ Վանքի բակում մեծ ոգևորութեամբ ցոյց արեց Ամեն. Տէր Տեղակալին, Սրբազան Արիստակէս եպիս. Սեդրակեանին: Աշխարհական պատգամաւորներից մի քանիսը հասարակութեան առանձին համակրութեանը արժանացան, դրանցից առանձնապէս պ. Գրիգոր Արծրունին: Այդպէս վերջացաւ մայիսի 5-ի փառաւոր ընտրութիւնը, հայ ժողովրդի յիշատակի մէջ մշտապէս մնալու համար:

Նոյն օրը երեկոյեան Վանքի բակում կարգադրութեամբ Ամեն. Տէր Տեղակալի գեղեցիկ ճրագաւառութիւն և հրախաղութիւն կար: Էջմիածնի Միաբանութիւնը, պատգամաւորութիւնը և բազմաթիւ հասարակութիւնը արտասովոր ուրախութեամբ տօնում էր Հայ ազգի փափագի իրագործումը: Ճեմարանի Տեսուչ Սրբազան Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը բերել էր Վանքի բակը ճեմարանի աշակերտներին, որոնց մասը նրա հսկողութեան տակ երգում էր ազգային երգեր, ամենից շատ ի հարկէ Հայրիկի երգը, որը ծածկում էր անթիւ կեցցէներով և ուրախութեան բացականչութիւններով: Աշակերտների միւս մասը Վէհարանի տանիքից դիւթական լապտերով ցոյց էր տալիս հասարակութեանը Հայրիկի պատկերը, որի ամեն անգամ երևան գալիս հասարակութիւնը վերին աստիճանի յուզում էր և կեցցէ Հայրիկ ձայները թնդացնում էին օդը, իսկ բակում գտնուող ճեմարանի աշակերտները այդ ժամանակ երգում էին Հայրիկի երգը: Հետեւալ օրը պատգամաւորութիւնը ներկայացրեց Ամենապատիւ Տէր Տեղակալին՝ իւր ուղերձը, որը տպւում է ներկայ համարում:


## Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր



Համազգային ընտրողական ժողովի նախագահ  
 Լժևնապատիւ Արքազան Տեղապահ Երեմիա եպիս-  
 կոպոսի Խորիմեան Հայրիկին ուղղած Տե-  
 ոագիրը:

ՆՈՐԻՆ ԲԵՐԶՐ ՄՐԲԸՆՈՒԹԵԼՆ  
 ԽՐԻՄԵԼՆ ՀԵՅՐԻԿԻՆ


Եջմիածնի ընտրողական ժողովը միաձայն ընտ-  
 րեց Ձեզ կաթողիկոսական գահի կանգիդատ: Յու-  
 սալով տեսնել Ձերդ Բարձր Արքազնութիւնը Ս.  
 Գրիգոր Լուսաւորչի գահի վրա, ջերմ կերպով աղօ-  
 թումենք առ Լստուած, որ պահպանի Ձեր թան-  
 գագին կեանքը:



Տեղակալ Արքազան Երեմիա եպիսկոպոսի Տեոա-  
 գիրը Կ. Պօլսոյ Լժևնապատիւ Արքազան Պատ-  
 րիարք Խորէն Արք-եպիսկոպոս Ազգեանին:

Համազգային ժողովը կատարեալ համաձայնու-  
 թեամբ և միաբանութեամբ ընտրեց միաձայն Խրի-  
 մեանին 72 քուէով, Իզմիրլեանին 50:

ՏԵՂԱԿԱԼ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ՝



## Մենապատիւ Խորիմեան Սրբազանի պատասխանը.

Կ Ա թ Ո Ւ Ղ Ի Կ Ո Ս Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ Ս Ր Բ Ա Ջ Ա Ն Ե Ր Ե Մ Ի Ա,  
Է Ջ Մ Ի Ա Մ Ի Ն.

«Ընկալեալ զՏեռագիր շնորհաւորութեան Սրբազնութեանդ յայտնեմ զիմ սրտագին շնորհակալիս, ի լեռնէն Սիօնի ողջունեմ զձեզ և զՏամայն միաբան եղբարս ի Քրիստոս, աղօթեմ առ Տէր անսասան պահել զԼ[թող Հայրապետական և զորդիս Հայաստանեայց եկեղեցւոյ:

Խ Ր Ի Մ Ե Ա Ն Հ Ա Յ Ր Ի Կ.

— 0 —

## Մենապատիւ Խորէն Սրբազան Պատրիարքի պատասխանը.

Ե Ր Ե Մ Ի Ա Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Է Ջ Մ Ի Ա Մ Ի Ն.

«Ստացանք Ձեր Տեռագիրն տեղականալով կաթողիկոսական ընտրութեան վերջնական արդեանց, հաղորդեցինք կեդրոնական վարչութեան ի գիտութիւն:

Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Խ Ո Ր Է Ն.

## Յ Ո Ի Յ Ա Կ

ԱՆԴԱՄՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ, ՈՐ ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ, ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Յ Յ - 5-Ն Մ Ա Յ Ի Ս Ի 1892 Ա Մ Ի:

ՍԻՆՀՈՒՈՍՆ Ս. ԷՋՄԻԱՅՆԻ.

- 1 Տ. Երեմիա Եպիսկոպոս Տեղապահ.
- 2 Տ. Գրիգորիա Եպիսկոպոս Ազուանեան.
- 3 Տ. Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեան.
- 4 Տ. Սարգիս Եպիսկոպոս Տէր-Գասպարեան.
- 5 Տ. Արիստակէս Եպիսկոպոս Դաւթեան.
- 6 Տ. Ներսէս Վարդապետ Հայկազունի.
- 7 Տ. Վահան Վարդապետ Տէր-Գրիգորեան.

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՔ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱՅՆԻ.

- 8 Տ. Յովհաննէս Եպիսկոպոս Տ. Յարութիւնեան
- 9 Տ. Մինաս Ժ. Վարդապետ Պարոն-Վարդեանց.
- 10 Տ. Յովակիմ Վարդապետ Ղամէքեան.
- 11 Տ. Յովհաննէս Վարդապետ Գպիր-Վարդանեան.
- 12 Տ. Եղիա Վարդապետ Հասան-Չալալեանց.
- 13 Տ. Վարդան Վարդապետ Վարդանեան.
- 14 Տ. Ղևոնդ Վարդապետ Յովակիմեան.

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՔ ՊԱՏՐԻԱՐԻՈՒԹԵԱՆՅ.

- 15 Տ. Սահակ Եպս. Խապայեան ներկ. Ս. Պատր. Երուսաղէմի.
- 16 Տ. Մաղաքիա Եպս. Օրմանեան ներկ. Ս. Պատրիարքի Կ. Պօլսոյ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՔ ՎԻՃԱԿԱՅ.

- 17 Տ. Մեսրոպ Արքեպիս. Սուքիասեան Առաջ. Ազրիանուպօլսոյ
- 18 Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեան Առաջնորդ Շամախույ

- 19 Տ. Տեղապահ էրեմիա Եպս. ներկայ. Առաջնորդին Կամախու.
- 20 Տ. Հմայեակ Եպիսկոպոս Դիմաքսեան Առաջնորդ Թէքիրդաղի.
- 21 } Տ. Ղևոնդ Եպիս. Շիշմանեան Առաջնորդ Կարնոյ և ներկ.
- 22 } Բասենոյ.
- 23 Տ. Մաղաքիա Եպս. Օրմանեան ներկ. Շապին-Պարաշխարի.
- 24 Տ. Մամբրէ Եպս. Սանասարեան Առաջնորդ Տփխեաց.
- 25 Տ. Կարապետ Եպիսկոպոս Այվազեան Առաջնորդ Արցախու.
- 26 Տ. Ստեփաննոս Եպիսկոպոս Յովակիմեան Առաջ. Նիկոմիդիոյ.
- 27 Տ. Գրիգոր Եպս. Գառնակերեան փոխ-Թեմակալ Երևանու.
- 28 Տ. Եղիշէ վարդ. Ամատունի ներ. առաջ. Ատրպատականի.
- 29 Տ. Խաչատուր Ժ. վ. Կարապետեան ներկ. առաջ. Պարսկ և Հնդ.
- 30 } Տ. Պօղոս վարդապետ Խոլտամեան Առաջնորդ Կուտինայի. և
- 31 } ներկ. Բրուսայի.
- 32 Տ. Ներսէս Ժ. վ. Աքսլանեան Առաջնորդ Զմիւռնիոյ.
- 33 Տ. Արիստակէս վարդ. Տ. Սարգսեան պատր. փոխ. Տրապիզոնի.
- 34 } Տ. Եղիշէ վարդապետ Այվազեան պատր. փոխ. Վիճակաց Եւ-
- 35 } դոկիոյ և Ամասիոյ.
- 36 Տ. Գէորգ Ժ. վարդապետ Իւթիւճեան Առաջնորդ Եգիպտոսի.
- 37 } Տ. Գէորգ Ժ. վարդապետ Երիցեան պատր. փոխ. Վիճակա-
- 38 } Ռումանիոյ և Բուլղարիոյ.
- 39 Տ. Յովհաննէս Ժ. վ. Արշարունի Առաջնորդ Երզնկայի.
- 40 Տ. Տրդատ վարդապետ Պալեան Առաջ. Կեսարիոյ.
- 41 Տ. Եփրեմ արեղայ Սուքիասեան. ներկ. Առաջ. Բեսսարաբիոյ
- 42 Տ. Նահապետ Արեղայ Նահապետեան ներկ. Սեբաստիոյ.
- 43 Տ. Բարթուղիմէոս աւագ քհն. Սարրաճեան ներ. Չարշամբայի.
- 44 Տ. Խորէն Աւագ քահանայ վարդերեան ներկ. Գաղատիոյ.
- 45 Տ. Յարութիւն քահանայ Յակոբեան ներկ. Ակնայ.
- 46 Տ. Յովհաննէս քահանայ Տէր Յովհանեան ներկ. Բայազիտի.

ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՔ ՎԻՃԱԿԱՅ

- 47 } Տիգրան Եֆէնդի Կիւմիւշկէրտան Կ. Պօլսոյ և Արաբկերի.
- 48 } Պ. Գրիգոր Արծրունի Տփխեաց.
- 49 Պ. Համբարձում Առաքելեան Պարսկ. և Հնդկաստանի.
- 50 Պ. Աբգար Յովհաննէսեան Բրուսայի.
- 51 Պ.

- 52 Մագսուտ էֆ. Սանտաղճեան Ազրիանուպոլսոյ.  
 53 Պ. Ռուբէն Հասան — Զալալեան Երևանի.  
 54 Յարութիւն էֆ. Թորոսեան Երուսաղէմի.  
 55 Գարեգին Յովհ. Փափազեան Զմիւռնիոյ.  
 56 } Կարապետ էֆ. Տէր-Ազարեան Կարնոյ և Մշոյ.  
 57 }  
 58 Պ. Ստեփան Մամիկոնեան Բեսարաբիոյ.  
 59 Յովհաննէս էֆ. Կուլբէնկեան Սերաստիոյ.  
 60 Յարութիւն էֆ. Շահրիկեան Տրապիզանի.  
 61 Պ. Աղեքսանդր Մելիք-Ազարեան Ատրպատականի.  
 62 Պ. Յովհաննէս Սարգսեան Աստրախանի.  
 63 Գասպար էֆ. Գասպարեան Նիկիմիդիոյ.  
 64 Համբարձում էֆ. Մաստիճեան Կեսարիոյ.  
 65 Համբարձում էֆ. Լէփեան Երզնկայի.  
 66 Պ. Սարգիս Ենգիբարեան Բայազիտի.  
 67 Կարապետ էֆ. Փափազեան Ամասիոյ.  
 68 Դոկ. Յակոբ էֆ. Նէփրուզեան Թէքիրդաղի.  
 69 Պ. Ներսէս Աթաբէկեան Շուշուոյ.  
 70 Պ. Աղեքսանդր Լալայեան Շամախուոյ.  
 71 Խաչատուր էֆ. Արսլանեան Չարշամբայի.  
 72 Յովսէփ էֆ. Ճանիկեան Ակնայ.  
 73 Կարապետ էֆ. Մարգարեան Բաբերդի.

## ԱՌԱՔՈՂՔ ԶԳՐԱԽՈՐ ԿԱՐԾԻՍ ԻԻՐԵԱՆՅ.

- 74 Տ. Խորէն Եպիսկոպոս Մխիթարեան Առաջնորդ Եղեսիոյ.  
 75 Տ. Տիմոթէոս Եպիսկոպոս Սաիրիչեան Առաջնորդ Պանտրմայի.  
 76 Տ. Գէորգ Եպիս. Սուրբէնեան Առաջնորդ Աստրախանի.  
 77 Տ. Մինաս վարդապետ Ամրիկեան Առաջնորդ Չնքուշի.  
 78 Տ. Յովհաննէս վարդապետ Փափազեան Առաջնորդ Արղնոյ.  
 79 Տ. Ներսէս վարդապետ Տէր Սարգսեան Առաջ. փոխ. Դերջանի  
 80 Տ. Կարապետ քհնյ. Դերձակեան, Առաջ. փոխ. Տիգրանակերտի.  
 81 Մկրտիչ էֆ. Եկանեան աշխարհ. պատգամաւոր Տիգրանակերտի.  
 82 Համբարձում էֆ. Ալաճաճեան աշխ. պատ. Պանտրմայի.  
 83 Անտոն էֆ. Աղասեան աշխ. պատ. Կուլտինայի.  
 84 Յարութիւն էֆ. Արծրունի աշխարհական պատ. Եղեսիոյ.  
 85 Յովհաննէս էֆ Մ. Գալստեան աշխ. պատ. Դերջանի.  
 86 Յովհաննէս էֆ. Տէկիրմէնձեան աշխարհ. պատ. Չնքուշի.  
 87 Կարապետ էֆ. Մուրատեան աշխարհական պատ. Չմշկածագի.

## Ճ Ա Ռ

ԱՐՏԱՍԱՆՆԵԱԼ Ի ՀԱՄԱԶԳԱՅԻՆ—ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ  
ՎԻՆ՝ ՈՐ ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ Ի 4-Ն  
ՄԱՅԻՍԻ 1892 ԱՄԻ Ի Ս. ՏԱՃԱՐՆ ԷՋՄԻԱԾՆԻՍ ՈՐՈՎ ԱՌԱՋԱՐԿԵ-  
ՅԱՆ ՅԱՍՏԻՃԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՉՈՐՍ ԱՐԺԱՆԱԻՈՐԱԳՈՅՆ ԵԿԵ-  
ՂԵՅԱԿԱՆԻ ԵՒ ՄԻԱԶՄԱՅՆՈՒԹԵԱՄԲ ԸՆԳՈՒՆԵԼԻ ԵՂԵՆ՝

**Պատկառելի Համազգային Ընտրողական Ժողովոյ Սրբազան Նախագահ, Սրբազան Հարբ և յարգելի ընկերակիցք իմ:**

Համաձայն այն ազատութեան, որ օրէնքը և մասնաւորապէս նոյն օրէնքի 16-րդ յօդուածը տալիս է լիուրի ժողովիս ամեն մի անդամին, ըստ իւր ուղիղ հասկացողութեան և ըստ մաքուր խղճի մտաց արտայայտել իւր կարծիքը չորս աւագագոյն թեկնածուների մասին, որոնք պիտի համարուին իբրև արժանաւորագոյն անձինք բարձրանալու Ս. Լուսաւորչի Գահի վերայ, ստորագրեալս, յանուն և ի կողմանէ համայն հայ ժողովրդի Պարսկաստանի և Հնդկաստանի կառաջարկեմ իբրև աւագագոյն ընտրելիներ զԱմենապատիւ Տէր—Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեան, անուանեալն ՀԱՅՐԻԿ, Գերապատիւ Տէր Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան, Գերապատիւ Տէր—Խորէն Եպիսկոպոս Մխիթարեան և Գերապատիւ Տէր—Երեմիա Եպիսկոպոս Տէր—Սահակեան, Տեղապահ Պատր. Երուսաղէմի:

Ընդհանուր հայ ազգի փափագն և իղձն է Խրիմեանին տեսնել Հայրապետ, որովհետև Ս. Լուսաւորչի, Ս. Ներսէսի, Ս. Սահակի և Ս. Մեսրոպի Գահի վերայ պիտի բազմի մի անձն, որ իւր անձի մէջ ամիռփէ այն բոլոր բարեմասնութիւնները և յատկութիւնները, որոնց պատճառով մեր Առաքելական Ս. Եկեղեցին ի շարս ազգային անզուգական գործիչների և Եկեղեցւոյ սուրբերի է դասել այն երանելի Հայրապետներին: Խրիմեան՝ Հայր էհասարակաց, Ս. Աւետարանի և Ս. Առաքելոց հարազատ աշակերտ է, իւր անձն՝ իւր հօտի բարօրութեան և փրկութեան վերայ դնող քաջ հոյիւ, Նա վարձկան չէ, Նա սիմոնական չէ, Նա հայրենի Ս. Եկեղեցւոյ օրէնքները, կանոնները արժաթախրութեամբ փոփոխողը չէ. Նրա համար չկայ իշխան, հարուստ, տէր, մեծ, քաղաքացի, շինական, տգէտ, ուսեալ, այլ Նրա մեծ հոգու, սրտի և մտքի առաջ պատկերացած է միայն հայ ժողով-

վուրդ, ժողովուրդ, որի բարոյական, մտաւոր և կրօնական պահանջներին Նա պիտի լիութեամբ բաւարարութիւն տայ: Ս. Լուսաւորչի, Ներսէսի, Սահակի ԳաՏը պիտի բարձրանայ, իւր կոչման ամենաբարձր գագաթնակէտին պիտի հասնէ, երբ Խրիմեան Հայրիկ բազմէ Նրա վերայ, Նրա անխարգախ, անկաշառ, մաքուր հոգին պիտի լուսաւորէ Ս. Էջմիածնի վանքը և Հայաստան աշխարհը: Նրա բարոյական զօրութիւնը սյժ, թե պիտի տայ մեզ լինել մայրենի եկեղեցւոյ հարազատ զաւակներ, լինել ազնիւ, շիտակ քաղաքացիներ և ոչ թէ այս և այն փարախը թափառողներ: Նրա անցեալ գործունէութիւնը, Նրա վարած զանազան պաշտօններն, այն հանգամանքը, որ Նա նախ և առաջ զուտ հոգեւորական և հաւատացող, կատարեալ հաւատացող բարոյական և օրինապահ մարդ է, կատարեալ հաւատ են տալիս ինձ, որ Հայոց եկեղեցին և Հայ Ազգը Նրա Հովուապետութեան օրով պիտի պայծառանայ բարոյապէս. Նա գիտէ բոլորին օրինական շաւղի մէջ պահել. որով զկայ-երն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ:

Խրիմեանից յետոյ քառանուն ցանկը լրացնելու համար իբրև արժանաւորագոյն անձինք նկատուում են Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրեան, Խորէն Եպիսկոպոս Մխիթարեան և Երեմիա Եպիսկոպոս Տէր—Սահակեան, որոնց ունեցած բարեմասնութիւններն նոյնպէս յայտնի են:

Ս. Հարք, պարօններ, այս սուրբ տաճարի մէջ գումարուած է Ազգային վեհաժողով որ ահագին պատմական նշանակութիւն պիտի ունենայ. այսօր ամբողջ Հայ ազգի աչքը յառած է այստեղ այս Ս. Սեղանին, ուր Միածին Որդին իջած է:

Ապացուցէք, ապացուցանենք, որ արժանաւոր անդամներ ենք այս վեհաժողովին. մի մոռանաք, որ ապագայ սերունդ կայ, պատմութեան անաչառ, ահեղ գատատտան կայ, գատակնէք կայ, եթէ մենք հակառակ ամբողջ ազգի ցանկութեան, ի վնաս Ս. եկեղեցւոյ լընարենք պաշտելի ՀԱՅՐԻԿԻՆ:

Պատգամաւոր Պարսկաստանի և Հնդկաստանի

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ:

ԾՆՆ. Վստիւմլայն համայն 65 անջին, «-նէցող, գիրաւորումն 72 յայ-  
նէց, Բրահմոն-ն ընկալան գորաւարկութիւնն զայս:

ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՄԱՏՈՒՑԱԾ ՈՒՂԵՐԶԸ  
Տ. ՏԵՎԱՊԱՀԻՆ.

### ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ՏԷՐ ՏԵՂԱՊԱՀ

ԵՐԵՄԻԱ, ԵՊԻՍԿՈՊՈՍ, ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵ-  
ՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ.

Մեք, աշխարհական պատգամաւորներս թուրքիոյ, Ռուսիոյ,  
Պարսկաստանի և Հնդկաստանի՝ եկած լինելով Մայր Աթոռ Ս.  
Էջմիածին յանուն և ի կողմանէ ամբողջ հայ ազգի կատարելու  
Ս. Թագէտոսի, Ս. Բարգուղիմէոսի և Ս. Լուսաւորչի Աթոռակալի  
Ընտրութիւնը, այսօր, երբ մեր ստանձնած պաշտօնը կատարե-  
ցինք և եկել ենք խոնարհաբար մատուցանելու Ձեր Սրբազնու-  
թեան մեր հրաժեշտի ողջոյնը և հայցել Ձեր օրհնութիւնը,  
չենք կարող չարտայայտել Ձեր Սրբազնութեան մեր կատարեալ  
յարգանաց հաւաստիքը և խորին շնորհակալութեան ջերմ  
զգացումները լիան այն հեռատեսութեան, խոհականութեան,  
անաչառութեան, որով Գուք, իբրև Նախագահ, օրինակելի կեր-  
պով զեկամարեցիք Համազգային ժողովը:

Մատուցանելով յանուն ազգի մեր շնորհակալութիւնները,  
եմք Ձեր Սրբազնութեան խոնարհ օրգիք: Ի 6 Մայիսի 1892 ամի,  
Ս. Էջմիածին:

ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԱՆԴԱՄՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ  
ԺՈՂՈՎՈՅ.

- Յովսէփ Կ. Ճանիկեանց.
- Յովհաննէս Սարգսեանց.
- Ներսէս Աթաբէկեանց.
- Ք. Տ. Թ. Գասպարեանց.
- Տիգրան Կիւմիշկերտան.
- Յովհաննէս Կիւլպէնկեանց.
- Դօքթ. Յակոբ. Նէվրուզեանց.
- Ալէքսանդր Մէլիք-Ազարեանց.
- Ստեփան Մամիկոնեանց.
- Գ. Յ. Բարազեանց.
- Յարութիւն Շահրիկեանց.
- Յ. Թորոսեանց.
- Գրիգոր Արծրունի.
- Համբարձում Առաքելեանց.
- Խաչատուր Արսլանեանց.
- Արգար Յովհաննիսեանց
- Համբարձում Լէփեանց.
- Ռուբէն Հասան-Չալալեանց: